Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
դեկտեմբերի 3-ի N 750 - Ա
որոշման

«ՏԱՇԻՐ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵՌՆԱՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Տաշիր խոշորացված համայնքի Լեռնահովիտ գյուղի փողոցների և հարակից տարածքների, ինչպես նաև առանձնատների բարեկարգման աշխատանքների իրականացումը պայմանավորնած է առկա անցուղիների կիսաքանդ վիճակով և գյուղի գլխավոր փողոցի հարակից տարածքը ավելի բարեկարգ դարձնելու անհրաժեշտությունով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ձահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 4. | Ծրագրի կատարողը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Տաշիր, Ձահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, քաղ. Տաշիր, քաղաքաշինության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1,100,000,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Լոռու մարզ, ք. Տաշիրի խոշորացված համայնքը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2019 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2022 թվականի նոյեմբերի 30-ը: |

| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Տաշիր խոշորացված համայնքի Լեռնահովիտ գյուղի փողոցների հարակից տարածքների, ինչպես նաև առանձնատների 42000 ք.մ քայլուղիների, հարակից շինությունների բարեկարգման և արտաքին լուսավորության աշխատանքներ՝ 1,100,000,000 դրամ;<br>Տաշիր խոշորացված համայնքի Լեռնահովիտ գյուղի փողոցների հարակից տարածքների կանաչապատման և հողային աշխատանքներ՝ 10,000,000 դրամ:<br>Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև - 30.11.2022 թ. |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալվում է ծառայությունների մատուցման, Հայաստանի Հանրապետության տարածքում շինարարական նյութերի և ապրանքների ձեռք բերման դիմաց ստանալ հարկային արտոնություններ:<br><br>1. Կատարված աշխատանքներ<br>1.1. 29655 ք.մ քայլուղիների կողային պատերի երեսպատման, 10000 ք,մ հարակից շինությունների տանիքների, դարպասների հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքներ՝ 162,039,547 դրամի չափով<br>1.2. 12500 ք.մ քայլուղիների, հարակից շինությունների բարեկարգման համար շինանյութերի ձեռքբերում՝ 71,810,400 դրամի չափով<br>1.3. 55055 ք.մ հարակից շինությունների տանիքների հիմանորոգման համար շինանյութերի ձեռքբերում՝ 81,739,477 դրամի չափով<br>1.4. 4000 ք.մ քայլուղիների կողային գազատարների ապամոնտաժման և մոնտաժման աշխատանքներ՝ 15,000,000 դրամ,<br>1.5. 1550 ք.մ քայլուղիների հարակից շինությունների ճակատային պատուհանների, դռների պատրաստման և մոնտաժման աշխատանքներ՝ 33,663,650 դրամի չափով,<br>1.6. 40 հատ լեդ լուսատուների ներմուծում՝ 7,000,000 դրամ,<br>1.7. 1000 հատ ծառերի, տնկիների ձեռքբերում՝ կատարված է 1,280,000 դրամի չափով<br><br>2. Նախատեսվում է կատարել |

| | | |
|---|---|---|
| | | 2.1. 29655 ք.մ քայլուղիների կողային պատերի երեսպատման, 10000 ք,մ հարակից շինությունների տանիքների, դարպասների հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքներ՝ 449,599,535 դրամի չափով,<br>2.2. 12500 ք.մ քայլուղիների, հարակից շինությունների բարեկարգման համար շինանյութերի ձեռքբերում՝ 190,689,600 դրամի չափով,<br>2.3. 55055 ք.մ հարակից շինությունների տանիքների հիմնանորոգման համար շինանյութերի ձեռքբերում՝ 44,621,441 դրամի չափով,<br>2.4. 1550 ք.մ քայլուղիների, հարակից շինությունների ճակատային պատուհանների, դռների պատրաստման և մոնտաժման աշխատանքներ՝ 31,336,350 դրամի չափով,<br>2.5. 1000 հատ ծառերի, տնկիների ձեռքբերում 5,720,000 դրամի չափով,<br>2.6. 1000 հատ ծառերի, տնկիների տնկման և հողային աշխատանքներ՝ 3.000.000 դրամ<br>2.7. Նախագծային աշխատանքներ ՝ 2,500,000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ Լոռու մարզ, Տաշիր քաղաքի համայնքապետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ կվերահսկվի հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ